թեան բնագաւառում.- տե՛ս նոյնի՝ *Դրուագներ վրաց հին գրականութեան պատմութիւնից*, Թբիլիսի, 1962, էջ 376-382 (վրացերէն): **G. Garitte,** *Compléments a l'édition de la Vie géorgienne de S. Syméon Stylite l'Ancien*, "Le Muséon", t. LXXVI, Louvain, 1963, pp. 79-93.

15 Հմմտ. «Գիրք որ կոչի Այսմաւուրք», էջ ԵՃՁԳ-ԵՃՁԸ, "Le Synaxaire arménien de Ter Israel", publié et traduit par le D-r G-e Bayan, Paris, 1928, p. 495-501,

16 Le Synaxaire..., p. 500.

17 Սոյն դրուագի յունարէն նախատիպ եւ վերամշակեալ խմբագրութիւնների միջեւ առկայ տարբերութիւնները արձանագրուած են Ս. Շեստակովի հրապարակման մէջ (տե՛ս **С. Шестаков,** *Житие Симеона Дивногорца в его первичной редакции*, "Виз, Врем." т. XV, вып. 2-3, стр. 341-351.)

18 Վրացերէն թարգմանութեան ամբողջական գիտական հրատարակութիւնը տե՛ս «Կիմէն» (Kaimena), հատ. Ա, Վրաց վարքագրական յուշարձաններ. յունուար-մայիս ամիսների տեքստեր: Առաջաբանը, ուսումնասիրութիւնն ու խմբագրութիւնը Կ. Կեկելիձէի, Տփղիս, 1918, էջ 215-340 (վրաց.):»

19 Տեղանքի, հնութիւնների նկարագրութիւնը եւ մենաստանի արձանագրութիւնների վերծանութիւնը տե՛ս **Jean Mécérian,** *Les inscriptions de Mond Admirable*, Beyrout, 19626 p. 297-330.

20 Ընտանիքով Հայաստանից Անտիոք գաղթելու մասին մի վկայութիւն ունենք լատինական Եկեղեցու սուրբ, հայազգի Մակարիոս եպիսկոպոսի վարքում, ըստ որի իշխանական ընտանիքից սերող եւ նոր բնակավայրում ծնուած ապագայ բարեգործն ու քարոզիչը ոչ միայն գիտէր մայրենի հայերէնը (նաեւ՝ յունարէն, ասորերէն, արաբերէն ու եբրայերէն), այլեւ ունէր անտիոքացի հայազգի չորս գաղափարակից ընկեր, որոնց հետ նա ուխտագնացութեան ու քարոզչութեան մեկնեց Երուսաղէմ (տե՛ս Acta Sanctorum, t. I (1675), էջ 873-896, նաեւ՝ Bibliotheca Hagiographica Latina, Bruxelle, 1900-1901, էջ 757, հմմտ. **Ա. Սարուխան,** *Բելգիա եւ հայերը*, ՀԱ, էջ 1934, էջ 144-148): Այդ նշանակում է, թէ X-XI դարերում Անտիոքում բաւական ստուար հայութիւն կար՝ հարկաւ նախորդ դարերից բնակութիւն հաստատած:

21 «Դրուագներ...», հտ.7, էջ 5:

ՀԱՅՈՑ ՏԱՐԱԶԱՆԱԽՇԵՐԻ ԳՈՒՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՒՆԸՆԿԱԼՈՒՄԸ

Արմենուհի Ստեփանեան

Իւրաքանչիւր ժողովրդի տարազաձեւերի ու տարազի զարդանախշերի գունային համակարգը ձեւաւորուել է ժամանակի ընթացքում, տուեալ ժողովրդի խորհրդանշային (սիմվոլիկ) մտածողութեանը, գեղագիտական ճաշակին ու ըմբռնումներին համապատասխան:

Տարազային համալիրի, ինչպէս նաեւ տարազի զարդանախշի բնութագրման խնդրում յոյժ կարեւոր է գունաշարն ամբողջութեամբ եւ որեւէ գոյնին տրուող նախապատուութիւնը: Վերջին հանգամանքն, ինչպէս իրաւացիօրէն նշում է Ե. Ստուդենեցկայան, կարող էր երբեմն ցեղանուան (էթնոնիմի) ծագման պատճառ դառնալ, օր.՝ «Կարակալպակներ» (սեւ գլխարկաւորներ)[1]:

Գոյնը զարդանախշն ընկալելու անհրաժեշտ միջոց է: Գոյնի եւ ձեւի ներդաշնակութիւնը ստեղծում է ընդհանուր համահնչունութիւն եւ էլ աւելի է ընդգծում զարդանախշուած հատուածի նշանակութիւնը: Խայտաբղէտութիւնից զերծ տարազային զարդանախշերի գունաշարին բնորոշ են հանդարտ ու զուսպ գունային անցումները՝ նրբերանգների հմուտ օգտագործմամբ: Համաչափութեան սկզբունքը, որն ընկած է գունային համակցութիւնների հիմքում, ստեղծում է հաւասարակշռութիւն զարդանախշային յօրինուածքների բոլոր մասերում՝ անկախ գործուածքի ծաւալից եւ զարդանախշուած մակերեսից:

Զարդանախշերի գունային աւանդոյթները, սկիզբ առնելով հեռաւոր ժամանակներից, ձեւաւորման նոր փուլ են մտնում միջնադարում, երբ գոյնն ընկալւում էր որոշակի խորհրդանշական իմաստով: Միջնադարեան գունային սիմվոլիկան բարդ ու բազմազան հասկացութիւնների համալիր է[2]: Տակաւին միջնադարում մեկնաբանները քաջ տեղեակ են եղել մարդկային հոգեբանութեան վրայ գոյնի ներազդող ուժին, ինչը եւ լաւագոյնս օգտագործուել է մանրանկարներում, աւետարանական տեսարաններում: Ըստ այդմ, քրիստոնէական գաղափարաբանութիւնն արտայայտող գոյների խորհրդիմաստն իր հերթին խարսխուած էր շատ աւելի վաղ պատկերացումների վրայ: Եւ որքան էլ որ ժամանակի ընթացքում, անցնելով տարբեր մշակոյթների ու կրօնական պատկերացումների բովով, փոփոխուել է գոյների նշանակութիւնը, այնուամենայնիւ, ժողովրդի գունազգացողութիւնը պահպանել է նախնական շերտը՝ հարազատ մնալով գունային խորհրդանիշների վաղնջական ընկալմանը:

Տարազային զարդանախշերում օգտագործւում է ինչպէս միագոյն (մոնոխրոմ), այնպէս էլ բազմերանգ (պոլիխրոմ) գունաշար: Միագոյն գունաշարում կարեւորւում են նրբերանգային փոխանցումներն, ինչպէս եւ զարդանախշ-գունադաշտ փոխառնչակցութիւնը: Գունային համակցութիւններն ու գոյների «ընտրոյթայնութիւնը» կայուն եւ հին աւանդոյթների վկայութիւն է, ինչպէս այլուր, այնպէս էլ հայոց մէջ խարսխուած ժողովրդական գունընկալման վրայ: Այդ հիմամբ տարբերակւում են հիմնագոյները (կանաչ, կարմիր, կապոյտ,

© National Library of Armenia

դեղին, սեւ, սպիտակ) եւ ածանցեալները: Հայոց միջնադարում ընդունուած է եղել քառագոյն համակարգ, որը Գրիգոր Տաթեւացու վկայութեամբ արտայայտում էր աշխարհի չորս հիմնատարրի գաղափարը, այն է. «երկրի սեւութիւն, ջրոյն սպիտակութիւն, օդոյն կարմիրն եւ հրոյն դեղինն: Եւ ի սոցա խառնուածոցն լինին այլ զանազան գոյնք: Կապոյտ, գորշ եւ այլն»: Քառագոյն համակարգով միաժամանակ արտայայտւում էին եւ մարդկային բարոյական յատկանիշներ. «Եւ չորս գոյն. խոհեմութիւն թագաւորական ծիրանին, ողջախոհութիւն բեհեզ, կարմիր արիութիւն եւ մարտիրոսութիւն, կապոյտս է երկնաւոր արդարութիւն»[3]:

Խօսելով գունային համակարգերի որոշակի խորհրդանշական իմաստի մասին՝ հետաքրքրական է նշել ժողովրդի վերաբերմունքը պայծառ եւ մուգ գոյների հանդէպ, որոնցից առաջինները դիտւում են դրական, վերջինները՝ բացասական: Արցախի Ծամձոր գիւղի բնակիչների պատկերացմամբ ծիածանի իւրաքանչիւր գոյնը այս կամ այն ժողովրդի խորհրդանիշն էր: Ամենավառ գոյները հայերն են[4]: Ծիածանը տեսնելիս այնտեղ ասում են. «կանաչ-կարմիրը իմ ախպոր գլխին, սեւն ու սպիտակը թուրքի գլխին»[5]:

Բազմերանգութիւնն առհասարակ կամ պայծառ գոյների համադրութիւնն, ըստ ժողովրդական պատկերացման, ունի չարխափան նշանակութիւն: Այս մտայնութեամբ են պայմանաւորուած գոյնզգոյն թելերից հիւսած պարանով մեծ պասի «ակլատիզը» կախելու, չորացրած գորտի վրայ եօթներանգ թելով ասեղ խրելու եւ շատ այլ սովորոյթներ: Նման պատկերացումներ ծանօթ են եւ հարեւան ժողովուրդներին: Օրինակ՝ Կախեթում արգելւում էր մուգ գոյնի շորեր հագնել այն տանը, որտեղ մանկական տարափոխիկ հիւանդութեամբ տառապող երեխայ կար: Սգի մէջ գտնուողներին նոյնպէս պարտադրւում էր պայծառ գոյներ հագնել եւ համապատասխան գլխի յարդարանք կրել[6]:

Պայծառ գոյների նկատմամբ ունեցած այս վերաբերմունքն ուրոյն դրսեւորում է գտնում զարդանախշային գունաշարում, որտեղ, անկախ գունային համակցութիւններից ու գոյների քանակից, ընդհանուր ձգտում է զգացւում դէպի պայծառը, լուսաւորը, որն առհասարակ բնորոշ է հայ զարդարուեստի գունաոճին: Զարդանախշային գունաշարում գոյներից մէկը, սովորաբար ամենապայծառը գերադասն է (դոմինանտ), որն ընդգծուելով որոշակի շեշտ ու համաչափութիւն է հաղորդում տուեալ գունաշարին: Մեծ մասամբ այդպիսին կարմիրն է, ամենատարածուածն ու նախապատուելին[7]: Կարմիրը նախ եւ առաջ արեան գոյնն է, որն ինքը կեանքն է եւ այս իմաստով հանդէս է գալիս իբրեւ «պահպանակ» եւ «չարհալած»: Պատահական չէ, որ թէ՛ հայոց եւ թէ՛ ուրիշ շատ ժողովուրդների մէջ ընդունուած է կանանց ու երեխաների կարմիր ներքնազգեստն իբրեւ միջոց «չար աչքի» դէմ[8]: Ժողովուրդը կարմիր գոյնի հետ է կապել իր լաւագոյն սպասումները: Տարին առատ ու «կարմիր» օրերով երջանիկ լինելու ակնկալիքով կարմիր թելեր ու հագուստի ծուէններ էին կախում սուրբ համարուող ծառերից ու թփերից, կարմիր թել կապում անասունների եղջիւրներին եւ ագիներին[9]: Մինչեւ XIX դ. վերջ, XX դ. սկիզբ պահպանուած այս սովորոյթը հեթանոսական ժամանակաշրջանի արձագանք էր, որի դէմ իր շրջաբերականում քարոզում էր Ներսէս Շնորհալին՝ զգուշացնելով զերծ մնալ կենդանապաշտական սովորոյթներից, «... կարմիր արկանելօք ծածկել զանասունն եւ յեղջիւրսն

նարօտ կապել ըստ հնոյն օրինի, ամենեւին մի առնէք, զի աւելորդ եւ անօգուտ է...»[10]:

Մէկ այլ դէպքում երիտասարդ աղջիկներն իրենց բախտն ու կեանքի տեւողութիւնն էին կապում կարմիր գոյնի հետ՝ Զատկի չիք չորեքշաբթի օրը բոյսերը կարմիր թելով կապելով եւ առաւօտեան աճը չափելով: Նոյն օրը վանեցի աղջիկները ձու էին դնում տանիքին, որպէսզի վրան գրուէր իրենց բախտը, կարմիր գիրը բարի բախտ էր խոստանում[11]: Իբրեւ արեան գոյն՝ կարմիրն ակտիւ է պատկերացւում: Կարմիր գոյնի թռչունը, կենդանին ոչ միայն բարկացկոտ կարող է լինել, այլեւ բեղմնաւոր: Կարմիր կովի կաթը իւղոտ է, հաւը՝ ձուառատ, որը եւ արտացոլուել է Ծաղկազարդի խաղիկներում.

- Ուշ խատուտիկ եկել է,
Ծալէ շապիկ հագել է,
Կարմիր կովից իւղ կուզե,
Գոնդիկ հաւից հաւկիթ կուզէ[12].

Եւ, վերջապէս, կարմիր էր բնութեան զարթօնքը խորհրդանշող տօնի՝ Զատկի կենտրոնական առարկան՝ ձուն, որը խտացնում է բնութեան վերարտադրութեան, կեանքի յարատեւման գաղափարը: Կարմիրը հայերէնում նշանակել է եւ «լաւ»: «Կարմիր հաց» նշանակել է «լաւ թխած հաց», «կարմիր օր»՝ լաւ օր եւ այլն[13]: Իսկ «կարմիր հարս» նշանակում էր՝ նշանուած աղջիկ, «կարմիր գոգնոց»՝ կին, «կարմիր թել կապել»՝ նշան դնել, «կարմիր խնձոր»՝ հարսի անարատութեան խորհրդանիշ[14], նաեւ՝ հրաւէրքի նշան, արտայայտիչներն անմիջականօրէն առնչւում են հարսանեկան խորհրդիմաստին: Կարմիրն ամենուր աչքի էր զարնում հարսանեկան ծիսակատարութեան ողջ ընթացքում: Կարմիր էր հարսի քօղը, յաճախ զգեստը, որպիսին նկարագրում է Խաչատուր Կեչառեցին «հարսն ի կարմիր ձորձոյ եւ յոսկեթել զարդարեալ»[15]: Իսկ փեսայի կարմիր հանդերձի նկարագրութիւնը կարելի է գտնել յայտնի թագուորագովքերում:

- Մեր թագուորս էր խաչ,
Խաչկոկ-խաչ ու մաչ,
Պինիշն էր կարմիր,
Արեւն էր կանաչ:
Կոսպանդն էր կարմիր,
Արեւս էր կանաչ[16]:
- Մեր թագուորս էր խաչ,
Խաչկոկ-խաչ ու մաչ,
Սոլերն էր կարմիր,
Արեւը կանաչ:
Գուրպեքն էր կարմիր,
Արեւը կանաչ եւ այլն[17]:

Ամուսնութեան խորհրդանիշ «կոսպանը» (թագուոր-փեսացուի ուսով խաչաձեւ կապուող կարմիր-կանաչ մետաքսէ թաշկինակ), ինչպէս նաեւ «նարօտը»[18] (կանաչ-կարմիր ոլորուն թելից հիւսուած, որն անցկացնում էին նաեւ նորակնունք երեխայի վիզն՝ իբրեւ պահպանակ), մեկտեղում էին կեանք (կին) եւ սերնդաշարունակութիւն (տղամարդ) հասկացութիւնները: Պատահական չէ, որ արու զաւակը Սասունում կոչւում էր «օջախը կանաչեցնող»[19], իսկ վասպուրականցի կանայք Դաշտի թաղում արեւածագին աղօթում էին՝ «կանաչ-արեւ» զաւակ խնդրելով[20]: Գանձակում նարօտի ձեւով կանաչ-կարմիր-սպիտակ ոլորուն թելն ամրացնում են թագաւոր-փեսայի գլխարկին[21], իսկ Սասունում նարօտը կարմիր ու սպիտակ ոլորուն թելերից էր պատրաստւում[22]: Այս գունային զոյգը, որն առաւել նախնական է, ինչպէս եւ նախորդը, խորհրդանշում է աղջիկն ու տղան, որն արտացոլուած է վանեցիների հարսանեաց երգերում, օրինակ՝

- Թագուոր, ինչ պիրեմ քեզ նման,

© National Library of Armenia

Քեռ կանաչ արեւ դու նման,
Ճերմակ վարդ, որ կը բացուէր,
Բացուէր քեռ արեւ, դու նման:

- Թագուհի, ինչ պիրեմ քեռ նման,
Քեռ կանաչ արեւ դու նման.
Կարմիր վարդ, որ կը բացուէր,
Բացուէր քեռ արեւ, դու նման[23]:

Կարմիր ու սպիտակ ոլորուն բրդէ թելի ծիսական կիրառութիւնը հետաքրքիր զուգահեռներ ունի խեթական աղբիւրներում: Խեթական տեքստերից մէկում խօսւում է այն մասին, որ թագաւորն ու թագուհին, բրդէ թելերը ոլորելով, միահիւսում են իրար, թագաւորը՝ սպիտակը, թագուհին՝ կարմիրը, որից հետեւում է, որ կարմիրը խորհրդանշում է կինը, սպիտակը՝ տղամարդը, քանի որ հին ժողովուրդների մտայնութեամբ սպիտակն արական սերմի գոյնն էր, կարմիրը՝ արեան (կնոջ): Ըստ հին հնդկական փիլիսոփայութեան մարմինը ձեւաւորւում է արական տարրերից (որոնց մէջ է մտնում նաեւ սերմը) եւ իգական տարրերից (մկանունք, արիւն, մազեր)[24]: Նշանակում է՝ վերոյիշեալ ծիսական արարողութեամբ միախառնւում է իգական եւ արական սկիզբը, այսինքն՝ տեղի է ունենում արարչագործութիւն, որը վերաբերում է նաեւ կարմիր-սպիտակ[25] կամ կարմիր-կանաչ նարօտին՝ որպէս միաւորման խորհրդանիշի, քանի որ ամուսնութիւնն էլ, ի վերջոյ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ արարչագործութիւն, նոր կեանքի ստեղծում: Կանաչ-կարմիրը գերակշռում է օժիտի կամ հարսանեկան արարողութեան առթիւ հիւսած գուլպաների եւ հագուստի միւս մասերի զարդանախշերում: Կարմրին զուգակցող կանաչը շրջակայ բնութեան, բուսականութեան գոյնն է: Մարդկային գործունէութեան բոլոր ոլորտներում կանաչը բոյսի ու յաւերժ երիտասարդութեան խորհրդանիշն է: Այդ են վկայում «ձեռքդ դալարի», «ձեռքդ կանաչի», «մէջքդ կանաչ» (ասւում է ջահել հարսին՝ շատ զաւակներ ունենալու մաղթանքով) օրհնանքները: Կանաչն իբրեւ ներկ, ստացւում է դեղինի ու կապոյտի խառնուրդից եւ լոյսի սպեկտրում այն միջակայ դիրք է գրաւում կապոյտի եւ դեղինի միջեւ: Այս հանգամանքը դրսեւորւում է լեզուական մակարդակում: Հնդեւրոպական լեզուներում շփոթութիւն է նկատւում «կանաչի» եւ «դեղինի» անուանումների միջեւ: Սրանում համոզուելու համար բաւական է համեմատել հին նախալեզուի -dhel- արմատից առաջացած հետեւեալ շարքը՝ դեղին, դեղ, կանաչ, խոտ, դալարիք, կանաչեղէն, դեղնականաչ բժշկական խէտ, դալուկ, դալկանալ, դալուկն, դեղնացաւ, նաեւ՝ ծաղկել, կանաչել, տերեւակալել եւ այլն[26]: Իմաստային այս փոխանցմամբ կանաչը նոյնանում է դեղինին: Ցիշենք նաեւ, որ Գրիգոր Տաթեւացու բնորոշմամբ կանաչը չէր դիտւում իբրեւ «բնական որակ գունացս»: Սակայն դեղին գոյնը ժողովրդական ընկալմամբ դիտւում է իբրեւ բացասական: Այն նոյնանում է «դեղնուց», «դեղնախտ» հիւանդութեան հետ: Այս առիթով հետաքրքրական է, որ ծիածանի գոյներում դեղին շերտի լայնութիւնը հիւանդութեան նշան է համարւում[27]: Որպէսզի երեխան «դեղնուց» չընկնի, խուսափում էին դեղին գոյնի զարդ կրել ծննդկանի մօտ, իսկ եթէ դա արդէն տեղի է ունեցել, երեխային լողացնում էին տուեալ անձնաւորութեան զարդի կամ ոսկեդրամի վրայ[28]: «Դեղնուց»-ով հիւանդ երեխայի համար ապաքինում խնդրելու նպատակով դիմում էին լուսնին.

- Լուսնիկ, լուսնիկ, յուսուա՞յ կու գաս,
- Հեր Աբրահամու ծովուն վրրաւէն:

- Դուն դեղին, ձիդ է դեղին,
Մօրուքդ եկել, գոյնը դեղին[29].

Հարկ է նշել, սակայն, որ հին նախալեզուի -dhel- արմատը տալիս է նաեւ «լուսաւոր», «փայլուն», «պայծառ» իմաստները, որը ժողովրդի գունընկալման մէջ պահպանուել է իբրեւ ոսկեփայլ, արեւափայլ եւ այս առումով ամենեւին էլ պատահական չի ոսկեթելի օգտագործումն իբրեւ զարդ:

Լեզուական առումով որոշ իմաստային նոյնութիւններ է դրսեւորւում նաեւ կանաչի ու կապոյտի միջեւ: Ժողովրդական ընկալմամբ երկինքը կանաչ-կապոյտ է: Կանաչ-կապոյտ (չախալ) աչքը միշտ վատ (վտանգաւոր) է համարուել ու միշտ զգուշացել են այդպիսի աչք ունեցողներից: Կապոյտն ընկալուել է իբրեւ «մութ» գոյն եւ օգտագործուել է զանազան հմայական գործողութիւններում՝ հանդէս գալով իբրեւ պահպանակ[30]: «Թպղի» ունեցող կանայք իրենց երեխաներին կապոյտ գոյնի շոր են հագցրել, որպէսզի «չար աչքը» չկպնի[31]: Կապոյտ թուղթը, թելը, կտորը ժողովրդական բժշկութեան մէջ օգտագործւում էր զանազան հիւանդութիւնների դէմ դեղեր պատրաստելիս: Կապոյտը միջոց էր եւ լուսնոտութեան դէմ: Լուսնոտին տանում էին ներկարարի (բոյախանի) կարասի մօտ: Վարպետը կապոյտ ներկի փրփուրով խաչաձեւ դրոշմում էր հիւանդի ճակատը, բերանը, ծնօտն ու քիմքը[32]: Կապոյտը նաեւ ծերութեան եւ սգոյ գոյնն էր: Սիւնիքում, օրինակ, ծեր մարդու դագաղը ծածկում էին սեւ կամ կապոյտ շորով: Կոնստանդին Երզնկացու յիշատակութեամբ «...սգաւորք սեւ կամ կապոյտ զգեցցին ի վերայ մեռելոց»[33]:

Լեզուական մակարդակում կապոյտը միտում ունի խառնուելու սեւին եւ մոխրագոյնին: Իմաստային առումով յստակ չեն սահմանազատւում կապոյտի եւ երկնագոյնի անուանումները, թեպետեւ կապոյտն ունի բազմաթիւ հոմանիշներ, ինչպէս՝ լուրթ, ծաւի, մաւի, բիլ, լաջուարթ եւ այլն: Կապոյտ գոյնի անուանումն, ըստ Հայկազեան բառարանի, ծագել է պահլաւերէն Kapot արմատից (գորշ, երկնագոյն, աղաւնագոյն): Ն. Մառն այս արմատը կապում է յաբեթական Kam՝ երկինք արմատի հետ[34]: Սակայն երկինքն, ըստ ժողովրդական ընկալման, ջուր է (երկնքի եօթ շերտից առաջինն ամպ է, միւսները՝ ջուր): Երկնքի ծայրն ու վերջը ովկիանոսի վրայ են դրուած: Երկնային ջրերի մի մասն էլ կազմում են երկրային ջրերը՝ Արածանի (Մուրադ), Կուր (Քուռ), Արաքս եւ Սեւ ջուր գետերը[35]: Նշանակում է ջուրը նաեւ սեւ է, այսինքն՝ կապոյտն այս առումով եւս կարող է միախառնուել սեւին՝ դասուելով «մութ» կամ բացասական համարուող գոյների շարքը:

Գալով սեւի խորհրդիմաստին՝ պէտք է ասել, որ այն ներառում է առհասարակ գորշ գոյները՝ մոխրագոյն, շագանակագոյն, հողագոյն եւ այլն: Սեւը գոյներից ամենամութն ու մռայլն է եւ ընկալուել է միմիայն բացասաբար, իբրեւ «չարքմթարքի» ուղեկից ու մարդուն հակառակ, հետեւաբար եւ՝ վնասաբեր: Սատանան նոյնպէս պատկերւում է «սեւ»: Ցիշենք նաեւ, որ «սեւ գիր», «սեւ թուղթ», «սեւ քար» եւ այլ արտայայտութիւնները եւս ակնարկում են «սեւ» գոյնի կապը մի դէպքում՝ չար բախտի, միւսում մահի, հողի, անդրաշխարհի հետ: Հր. Աճառեանը գտնում է, որ «սեւ» բառի նման մի շատ հասարակ բառի փոխառեալ լինելը իրականից մեկնւում է արգելքով (տաբու): «Արդի բերբերական լեզուների մէջ,– գրում է նա,– ընդհանրապէս խուսափում էին արտասանել

© National Library of Armenia

«սեւ» բառը եւ ամէն մի գաւառ ունի այս իմաստն արտայայտելու մի առանձին ձեւ: Դրա համար է, որ հնդեւրոպական լեզուների մէջ չկայ «սեւ» իմաստով ընդհանուր բառ: Հնդեւրոպական հին ու նոր տարբեր լեզուներում «սեւը»-cyava, -syama,-cino- եւ այլ ձեւերում նշանակել է մութ, կապոյտ, թուխ, գորշ[36] եւ այլն: Լ. Սարաջեւան գտնում է, որ «սեւ» անուանումը նախապէս կարող էր ունենալ «մութ», «կեղտոտ», «բծերով ծածկուած» նշանակութիւն եւ փոխաբերական իմաստով նշանակէր «մահ» եւ «դժբախտութիւն»[37]:

Ինչպէս տեսնում ենք, մութ, մռայլ, գորշ, թուխ գոյները խմբաւորւում են «սեւ» անուանման մէջ: «Սեւ»-ը, ինչպէս նշուեց կապոյտի կապակցութեամբ, սգոյ ու մահուան գոյնն է, որն արտացոլուած է եւ «սեւ կապես», «սեւ գայ գլխիդ», «անունդ սեւ քարին գրուի» եւ նմանօրինակ անէծքներում: «Զարքը», «սատանան» պատկերւում են սեւ գոյնով: Այդ իմաստով սեւն առկայ - հմայական բանաձեւերում ու գործողութիւններում, բուժական հմայութեան մէջ, «չար աչքի» դէմ ուղղուած աղօթքներում.

- Սեւ դարն եմ գացէ, սեւ այծն եմ կթէ,
Պանիրն եմ դեղէ, չար աչքին եմ կերցրէ,
Չար աչքը չար փուշ, չար փուշն ի բարկ կրակ,
Կրակն անհատակ ծովեր:

կամ

Սեւ օձ բռնեցին, կթեցին, մերեցին,
Սեւ ձձում զարկեցին,
Սեւ կարագ հանեցին,
Չար աչքից դեղ էրին[38]:

Սեւ թռչունը, սեւ կենդանին ժողովրդական հաւատալիքներում տեսնում են «չարը» եւ զգուշացնում են նրա մօտենալու մասին: Զորեքմուտ, ուրբաթմուտ, կիրակմուտ երեկոները հիւանդ երեխային լողացնում էին մաղի տակ դրուած սեւ կատուի վրայ, որին իբր պէտք է փոխանցուէր հիւանդութիւնը[39]: Բասէնում սեւ հաւը խեղդում ու թաղում էին դռան շեմի տակ, որպէսզի «չարը» բաւարարուի դրանով ու չվնասի տան անդամներին[40]: Այս սովորոյթը դիտւում է եւ այլ ժողովուրդների մէջ: Օրինակ՝ չեխերը դեռեւս XIX դ. սեւ հաւն ու աքլորը խեղդում էին ջրափոսերում[41]:

Ռուսները եւս նմանօրինակ սովորոյթ ունէին, միայն թէ նրանք սեւ աքլորը կենդանի վիճակում թաղում էին հողում՝ իբրեւ զոհ ստորին ջրերի ոգուն: Այս նպատակով ջրաղացների մօտ սեւ աքլոր էին պահում:

Զարդանախշային գունաշարում «սեւը» գունային զոյգ է կազմում կարմիրի եւ սպիտակի հետ: Սպիտակը գոյներից ամենալուսաւորն ու պայծառն է: Սպիտակի հոմանիշներն են ձիւնաթոյր, կաթնագոյն, արծաթագոյն եւ այլն: «Սպիտակ» անուանումն առաջացել է հնդեւրոպական նախալեզուի - Kueit - փայլել, պայծառ արմատից[42]: Սպիտակը ծիսականօրէն «մաքուր» է դիտուել, նշանակել է նաեւ «անբիծ»: Սպիտակը խորհրդանշական է որպէս մկրտութեան հագուստի գոյն, որ կոչւում էր «հանդերձ փրկութեան»: Մկրտութիւնից յետոյ սպիտակ էին հագնում «ի նշան մաքրութեան հոգւոյն»[43]: Սպիտակը քրմական դասի տարբերանշանն էր հնդկական եւ պարսկական աւանդոյթներում: Ի թիւս շատ ժողովուրդների, հայոց սգոյ հագուստի գոյնը նոյնպէս սպիտակն էր: Այս կապակցութեամբ Հ. Ղ. Ալիշանը գրում է. «Սգոյ նշանաց մէջ սեւութիւն հասարակ է գրեթէ ամենայն ազգաց, բայց սպիտակութիւն նշանաւոր է մերազգեայց մէջ թէ ոչ ամէնուն, բայց մեծամեծաց կամ թագաւորաց եւ քահանայից համար, որոյ յատուկ էր սպիտակ հագնիլն, արքունի եւ կրօնական հանդիսից մէջ կառաց ձիերն ու զոհելու կենդանիք-պէտք է սպիտակ ըլլային, թուի թէ անոնց արքունական եւ սրբազան աստիճանը զրկել համարուէր սգոյ սեւն, անոր համար դագաղիս եւ յուղարկաւորութեան սպասքս եւ սպասաւորք սպիտակազգեստ ըլլային: Այս սովորութիւնս յարքունիս Հայոց՝ ինչուան վերջին հարստութեան (Ռուբէնեանց) մէջ այլ պահուած էր»[44]:

Ն. Տաղավարեանը եւս յիշատակում է սպիտակը որպէս սգոյ գոյն, որը յատուկ էր իշխանական ու քահանայական դասին. «Իբրեւ սգոյ գոյն ընդունուած էր սպիտակը, հայոց արքայք, քահանայապետը եւ իշխանք սպիտակ կը հագուէին պաշտօնապէս, սպիտակ էին իրենց կառքերը, ձիերը եւ այլն: Յուղարկաւորութեան առթիւ սպիտակազգեստ պարտ էին ըլլալ ոչ միայն մեռեալն, այլեւ մեռելակառքն քաշող ձիեր, սպասաւորները եւ այլն: Սակայն հասարակ ժողովուրդը սեւ կը հագնէր, ինչպէս Արտաշէս Բ-ի ձայնարկու կուսանք սեւազգեստք»[45]:

Սպիտակը, որպէս քահանայապետի սգոյ տարազի գոյն, յիշատակւում է նաեւ Սբ. Ղազարի հնագոյն (ԺԱ դարի) Մաշտոցում՝ «Ագուցանեն պարեգօտն սպիտակ եւ փիլոն սպիտակ եւ կնգուղ սպիտակ եւ գօտի մաշկեղէն եւ անդրավարտիս սպիտակ եւ գուրպայս յոտսն»[46]: Հայոց վերջին թագաւոր Լեւոնին եւս սպիտակ էին հագցրել եւ սգաւոր ազգակիցները ետեւից գնում էին սպիտակազգեստ[47]:

Ինչպէս վերը տեսանք կարմիր-սպիտակ ոլորուն նարօտի օրինակով, «սպիտակն» ընդունելի է եղել եւ հարսանեկան ծիսակարգում: Կարմիր ու սպիտակ գոյներով հիւսած նարօտը յիշատակում են Գրիգոր Սկեւռացին ու Գրիգոր Տաթեւացին: Միայն թէ նարօտի մեկնաբանութիւնը բխում էր քրիստոնէական ըմբռնումներից, համարելով այն «իբր նշան փրկչական կողէն բխած արեան ու ջրոյ, որով եկեղեցին միացաւ Յիսուսին»[48]:

«Ոսկեփորիկը» նարօտը կոչում է «առասան կարմիր ընդ սպիտակի մանեալ ի խորհուրդ մարդեղութեան Բանին»: Իսկ Գրիգոր Նարեկացին եւ Սարգիս Պիծակը յիշատակում են «ճերմակ բեհէզս պատմուճանի, մաքրափայլ ագանելիք» եւ առահասարակ «հանդերձ հարսանեաց սպիտակացեալ»:

XIV դարի հարսանեկան ծէսերի ու սովորոյթների նկարագրերից մէկում կրկին յիշատակւում է. «կարմիր ու բամբակի ճերմակ խառնեալ եւ երեք կղի շարամանեալ, մի կուղն կարմրովն խառնէ, երկուսն անխառս, միայն բամբակ, զոր մանեն փեսեղբայրս ու քահանայն, հարսին քոյրն եւ քահանայն եւ նովաւ կապեն ըզխառն ի պարանոցիս փեսային»: Յիշատակւում է նաեւ փեսային սպիտակ հանդերձ հագցնելու սովորոյթը[49], իսկ հարսին սպիտակ հագցնելու վկայութիւնը գտնում ենք Վ. Հացունու աշխատութեան մէջ. «Զհանդերձ հարսն յայն սպիտակացուցին»[50]: Ըստ երեւոյթին, սպիտակի գործածութիւնը մարդու կեանքի երեք կարեւորագոյն փուլերում (կնունք-մկրտութիւն, ամուսնութիւն, մահ), երբ առաջնային է դառնում հոգեւոր մաքրութեան, անարատութեան գաղափարը, առնչւում է հէնց այս հանգամանքն ընդգծելու անհրաժեշտութեան հետ, որով եւ պայմանաւորուած է սպիտակի՝ ծիսականօրէն մաքուր գոյնի ընկալումը: Այս ըմբռնումով կարելի է բացատրել մատաղի համար սպիտակ գոյնի կենդանուն, թռչնին տրուող նախապատուութիւնը: Սպիտակ ու կարմիր որձակն (աքաղաղ) ու ոչխարը մորթում էին, սպիտակ եւ կարմիր (լոյս ու ուրախութիւն) օրեր ապրելու ակնկալիքով: Բա-

© National Library of Armenia

ցարձակ անբիծ ու սպիտակ պէտք է լինէին հեթանոս հայերի՝ Արամազդին նուիրաբերուած ցուլերը, ձիերը, ջորիներն ու նոխազները եւ Անահիտին նուիրաբերուած արջառներն ու երինջները, որոնց ճակատին դրոշմում էին զոհի նշանը[51]:

Այսպիսով, սպիտակը, իսկ սպիտակի հետ եւ կարմիրը պատկերացումների որոշակի մակարդակում դիտուել են իբրեւ ծիսականօրէն «մաքուր» գոյներ, ի հակադրութիւն սեւի, որը դիտուել է իբրեւ ծիսականօրէն «անմաքուր»: Գոյների հետ կապուած այս «մաքուր» եւ «անմաքուր» հասկացութիւնները շատ աւելի յստակ են սահմանազատւում հին ժողովուրդների սովորոյթներում: Այսպէս, հին խեթական տեքստերից մէկում գուշակուհին ցաւն ու հիւանդութիւնը համապատասխան գոյների միջոցով փոխադրում է արձանիկներին: Ցաւն ու հիւանդութիւնը խորհրդանշող դեղին (կանաչ), երկնագոյն (կապոյտ, սեւ) գոյներն, իբրեւ ծիսականօրէն անմաքուր, հակադրւում են կարմրին, սպիտակին՝ իբրեւ ծիսականօրէն «մաքուր» գոյների[52]:

Այսպիսով, փաստօրէն առանձնանում է եռագոյն համակարգ, որտեղ «կարմիրի», «սպիտակի» կողքին կարող էր հանդէս գալ «մութ» կամ «սեւ» համարուող գոյներից որեւէ մէկը՝ դեղինը, կանաչը, երկնագոյնը, որը, միեւնոյն է, ընկալւում էր իբրեւ «սեւ»: Այդ գոյները խորհրդանշել են տիեզերքի ուղղաձիգ եռամաս կառուցուածքը, սեւը՝ ստորին աշխարհ, կարմիրը՝ միջին, սպիտակը՝ վերին, որի ցայտուն դրսեւորումներից մէկը յայտնի հեքիաթային թեման է երեք խոյերի (սեւ, կարմիր, սպիտակ) միջոցով թագաւորի տղայի «լոյս աշխարհ դուրս գալու» մասին[53]: Այս կապակցութեամբ ուշագրաւ էր խեթական թագաւորի զգեստափոխման արարողութիւնը: Թագաւորը ծիսակատարութեան սկզբում ճերմակազգեստ էր՝ ճերմակ կօշիկներով եւ կարմրաճերմակ, ոլորուն բրդաթել գօտիով: Ընթացքում նա փոխում է կօշիկները՝ հագնելով սեւը[54], որով հաստատում է իր իրաւունքները կամ իշխանութիւնը վերին եւ ստորին աշխարհների, այսինքն ողջ տիեզերքի վրայ[55]:

«Կարմիր-սեւ-սպիտակ» եռագոյն համակարգը շատ որոշակի է արտայայտուած եւ հայ ժողովրդի հաւատալիքային ու ծիսական համակարգերում: Ըստ ժողովրդական մեկնաբանութեան, սեւ-կարմիր-սպիտակ եռեակում սպիտակը նշանակում է երկնաւոր արդարութիւն, կարմիրը կեանք ու առողջութիւն, սեւը՝ մահ: Նոյն իմաստային նշանակութիւնն ունեն այս գոյների երազային մեկնաբանութիւնները, սպիտակ առարկայ տեսնելը արդարութիւն է, սեւը՝ սգի նշան, կարմիրը՝ կեանք: Այս եռագոյն համակարգը լայնօրէն օգտագործւում է բուժական հմայութեան մէջ եւ վերջինիս առնչուող աղօթքի տեքստերում: Այսպէս, հիւանդութեան պատճառն իմանալու համար գուշակուհին վերցնում է սեւ-կարմիր-սպիտակ գոյների թելեր, իւրաքանչիւրին մի սրբի անուն տալով ընկղմում ջրով լի թասի մէջ: Սպասում են մինչեւ թելերից մէկը դուրս գա, դրան համապատասխան էլ որոշում են, թէ որ սրբից է հիւանդութիւնը: Ժողովրդի պատկերմամբ, հիւանդութեան պատճառը «գրողներն» են: Նրանք երեք տեսակի ճիպոտ ունեն՝ կանաչ, կարմիր, սեւ: Կանաչ ճիպոտով զարկում են նրանց, ովքեր կարճ ժամանակով են հիւանդանալու, կարմրով՝ երկար ժամանակով անկողին ընկնողներին, սեւով՝ մահուան դատապարտուածներին[56]:

Զանգեզուրում Աւագ ուրբաթ օրն ամէն մայր իր մինչեւ տաս տարեկան երեխայի մէջքի կարմիր-սպիտակ-կապոյտ կտորից խաչ է կարում, որ կոչւում է «ուրբաթարուր»[57], այն պէտք է երեխային պահպանէր չարից ու կայծակից:

Ինչպէս տեսանք, եռագոյն համակարգում օգտագործւում էին գունային տարբեր համադրութիւններ, կարմիր-սպիտակ-սեւ, կարմիր-կանաչ-սպիտակ, կարմիր-սպիտակ-կապոյտ, կարմիր-կանաչ-սեւ, կարմիր-գորշ-սեւ, որոնցից ամենակայունը կարմիրն է, ապա սպիտակը, իսկ սեւը փոխարինւում է մերթ կապոյտով, մերթ կանաչով: Սեւն անկայուն է եւ կարող է փոխարինուել ուրիշ գոյներով, սակայն եռագոյն համակարգում իմաստային նշանակութիւնը մնում է նոյնը: Կարմիր-սպիտակ-սեւ եռագոյն համադրութիւնը բնորոշ է եւ հին հռոմէական դիցարանին, որտեղ երեք կարգի աստուածութիւններին համապատասխանում են երեք գոյնի կենդանիները, ինչն իր հերթին համապատասխանում է տիեզերքի եռամասնութեանը[58], ինչպէս խեթական տեքստերում: Հին Հնդկաստանում եւս մեծ կարեւորութիւն էր տրւում կարմիր-սպիտակ-սեւ եռագոյն համակարգին: Կարմիրը նախնական կրակի գոյնն էր, սպիտակը՝ նախնական ջրերի, իսկ սեւը՝ նախասկզբնական հողի (երկրի), միակ ճշմարիտն այս եռամասնութիւնն է[59]:

Այս երեք գոյները նաեւ գոյի տարբեր դրսեւորումներն են խորհրդանշում, այն է կարմիրը՝ կենդանի վիճակը՝ մարմինը, սեւը՝ մեռած վիճակը, իսկ սպիտակը՝ հոգին, որն անմահ է: Ուշադրութիւն է գրաւում այն պարագան, որ հին հնդկական պատկերացումներում սպիտակը միւս գոյներից առանձնանում է հոգեւոր բնոյթով ու մաքրութեամբ: Այս երեւոյթը դիտւում է եւ սեմական ժողովուրդների սովորոյթներում: Օրինակ եթէ արաբ տղամարդը խայտառակել է իրեն կամ խախտել է աւանդոյթը, ապա նրա դէմքը «սեւանում» է եւ միայն պատիւը վերականգնելուց ու խայտառակութիւնից մաքրուելուց յետոյ, այն կարող է «սպիտակել»[60]: Հետաքրքրական է, որ այս երեւոյթի արձագանքները պահպանուել եւ իւրովի դրսեւորում են գտել հայոց մէջ: Համեմատենք «սեւերես» (անամօթ), «երեսը սեւ անել», վերջինիս հետ կապուած նաեւ պարսաւելու, խայտառակելու նպատակով մեղաւորի (մինչեւ առագաստը մտնելը կուսութիւնը խախտածի) երեսին մուր քսելու սովորոյթը եւ հակառակը՝ «պարզերես», «երեսը պարզ անել», «բացերես» արտայայտութիւնները:

Զարգացման ցածր մակարդակում գտնուող ժողովուրդների աւանդոյթներում սպիտակը խորհրդանշում է բացայայտը, մաքուրը, ճշմարիտը, սեւը՝ քողարկուած գաղտնիքը, արգելուածը, որով եւ զուգորդւում է սեռական սիմվոլիկային[61]: Կարմիրն այս համակարգում երկակի դիրք է գրաւում. լինելով արեան գոյնը՝ այն կարող է ընկալուել ինչպէս «մաքուր», այնպէս էլ «անմաքուր»: «Անմաքուր» է համարւում այն դէպքում, երբ նկատի է առնւում սպանութեան եւ ծննդաբերութեան (դաշտանի) արիւնը: Այս իմաստով կարմիրը համարժէք է դառնում սեւին: Մաքուր է համարւում զոհի, մարտիրոսի արիւնը: Ինչպէս տեսանք, համակարգը հեշտութեամբ կարող է տրոհուել զոյգ համակցութիւնների, այն է սեւ-սպիտակ, սեւ-կարմիր, կարմիր ու սպիտակ: Այս հակադրութիւնների նախասկզբնական իմաստը, արտայայտելով լաւի ու վատի, չարի ու բարու, մթի ու լոյսի, կեանքի ու մահուան վերաբերեալ համամարդկային պատկերացումներն[62], ի վերջոյ, յանգել է բնութեան երկու հիմնական ուժերի՝ արական ու իգական սկզբի հակադրամիասնութեանը, որն ար-

© National Library of Armenia

տացոլուած է դեռեւս քարէ դարի ժամանակաշրջանի քարանձաւային պատկերներում, որտեղ ձախ կողմում պատկերուած կենդանիների գլուխները ներկուած են կարմիր, աջ կողմում եղջիւրները սեւ, նկատի առնելով ձախի ու աջի փոխյարաբերութիւնը, «որպէս ձախը՝ իգական, իսկ աջը՝ արական սկզբի, կարմիր գոյնը պէտք է խորհրդանշէր կինը՝ բնութեան իգական ուժերը, իսկ սեւը՝ տղամարդը, բնութեան արական ուժերը»[63]:

Խորհրդանշային տրամաբանութեան մասնագէտ Ա. Քեմների կարծիքով, երկակի համադրութեամբ մտածողութիւնն առհասարակ յատուկ է մարդուն: Մանկական մտածողութեան հոգեբանութեան ուսումնասիրութեան հիմամբ, որը շատ մօտ է մարդկային մտածողութեան նախնական մակարդակին, նա ենթադրում է, որ մարդն ի սկզբանէ աշխարհն ընկալել է որպէս վատ ու լաւի, չարի ու բարու հակադրամիասնութիւն[64]:

Ինչպէս արդէն պարզ է դառնում համեմատական նիւթի վերլուծութիւնից, կարմիր-սեւ-սպիտակ եռագոյն համակարգը, որը գունային բոլոր համակցումներից ամենակայունն է, բնորոշ է տարբեր ժամանակաշրջաններին եւ զարգացման տարբեր մակարդակ ունեցող ժողովուրդներին՝ ինչպէս ամբողջական, այնպէս էլ համակարգի իւրաքանչիւր գոյնի կամ գունային զոյգերի արտայայտած խորհրդիմաստի գրեթէ նոյնանման մեկնութեամբ ու ընկալմամբ: Գունային այս եռեակը, անցնելով դարերի միջով, հասել է միչեւ XIX դ. վերջը, XX դ. սկիզբը, կայուն տեղ զբաղեցնելով բանուածքի զարդանախշի գունաշարում, իսկ իմաստային նշանակութեամբ՝ կրօնա-հաւատալիքային պատկերացումներում՝ որպէս արգասիք ժողովրդի գունամտածողութեան եւ այդ մտածողութեան իւրովի դրսեւորում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Е. Н. Студенецкая.** *Одежда народов Северного Кавказа XVIII-XX вв.*, М., 1989, с. 215

2 Տե՛ս **П. Г. Котанджян.** *Цвет в раннесредневековой живописи Армении*, Ереван, 1978, էջ 18

3 **Գրիգոր Տաթեւացի,** *Գիրք հարցմանց*, Կ.Պոլիս, 1829, էջ 212, 297:

4 **Ս. Դ. Լիսիցեան,** *Զանգեզուրի հայերը*, Երեւան, 1969, էջ 67:

5 **Ե. Լալայեան,** *Բորչալուի գաւառ*,- Ազգագրական հանդէս (այսուհետ ԱՀ), գ. 10, Թիֆլիս, 1903, էջ 200:

6 **В. Бардавелидзе.** *Древнейшие религиозные верования и обрядого-графическое искусство грузинских племен.* Тбилиси, 1957, с. 86

7 Այդ են վկայում նաեւ կարմիր գոյնի ժողովրդական անուանումները (ալ, ալ-մալ, խաս, նաեւ լաւ, ղրմզի (արաբ.), ալաշ-քեալաշ, ծիրանի): Գուներանգների վերաբերեալ նիւթը մեզ տրամադրել է բանագէտ Հրաչեայ Վարդումեանը, որի համար շնորհակալութիւն ենք յայտնում:

8 Կարմիր թելն օգտագործւում է եւ շերամապահութեան մէջ. Տե՛ս **А. Петросян.** *Шелководство в Армении (историко-этнографическое исследование).* Диссертация по соисканию ученой степени кандидата исторических наук. Ереван, 1978, էջ 143:

9 **Ս. Դ. Լիսիցեան,** *Լեռնային Ղարաբաղի հայերը*,- Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն (այսուհետ ՀԱԲ), Երեւան, 1987, էջ 67:

10 **Ներսէս Շնորհալի,** *Ընդհանրական թուղթ*, Էջմիածին, 1869, էջ 262:

11 **Ե. Լալայեան,** *Վասպուրական*, ԱՀ, գ. 26, Թիֆլիս, 1916, էջ 151:

12 **Վ. Բդոյեան,** *Հայկական ժողովրդական խաղեր*, հտ. է, Երեւան, 1963, էջ 259:

13 Սլաւոնական լեզուներում նոյնպէս կարմիրն օգտագործում է նաեւ լաւ, գեղեցիկ նշանակութեամբ, "Красно-солнце", "Красно-девица".

14 **Հր. Աճառեան,** *Հայերէն գաւառական բառարան*, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1913, էջ 317:

15 **Վ. Հացունի,** *Պատմութիւն հին հայ տարազին*, Վենետիկ, Ս.Ղազար, 1923, էջ 304:

16 **Ե. Լալայեան,** *Վասպուրական*, ԱՀ, գ. 26, Թ. I, 1916, էջ 152:

17 **Գ. Նժդեհեան,** *Ալաշկերտ*, ԱՀ, գ. 7-8, Թ. I, 1901, էջ 448:

18 Կարմիր-կանաչ գունային զոյգին՝ աղջիկ-տղայ տարբերակմամբ, անդրադարձել է Զ. Խառատեանը, նարօտը դիտելով, որպէս զոյգի ծիսական ուղի: Տե՛ս **Զ. Խառատեան,** *Ամուսնական զոյգի ուղին հայոց հարսանիքում*,- Լրաբեր հասարակական գիտութիւնների (այսուհետ ԼՀԳ),

1989, թիւ 2, էջ 21-21:

19 **Վ. Պետոյեան,** *Սասնայ ազգագրութիւնը*, Երեւան, 1965, էջ 272:

20 **Ե. Լալայեան,** *Վասպուրական*, Անդ, էջ 52:

21 **Ե. Լալայեան,** *Ջաւախքի բուրմունք*,- Երկեր, հտ. 1, Երեւան, 1983, էջ 441:

22 **Վ. Պետոյեան,** նոյն տեղում:

23 **Ս. Հայկունի,** *Հարսանեաց երգեր*, ԷԱԺ, գ. Զ, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 31:

24 **Аль Бируни.** *Абу-рейжан-Мухаммед ибн Ахмед. Индия*, Избранные произведения, Ташкенд, 1963, с. 85.

25 Կարմիր ու սպիտակ ոլորուն նարօտն օգտագործուել է հմայութեան մէջ: Տե՛ս **А. Одабашян.** *Народные верования армян (по материалам рукописных талисманов XV-XIX вв.)*, - Кавказский этнографический сборник, т. 6, М., 1976, с. 118-126.

26 **Հր. Աճառեան,** *Հայերէնի արմատական բառարան*, հտ. 1, Երեւան, 1971, էջ 649, նաեւ՝ *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան*, հտ. 1, Երեւան, 1969, էջ 67:

27 **Ս. Դ. Լիսիցեան,** *Լեռնային Ղարաբաղի հայերը*, էջ 67:

28 **Ե. Լալայեան,** *Նախիջեւանի գաւառ*, մասն Ա, Գողթն, ԱՀ, գ. 11, Թ. I, 1904, էջ 188:

29 **Մ. Աբեղեան,** *Երկերի ժողովածու*, հտ. է, Երեւան, 1975, էջ 45:

30 Այստեղ էլ տեսնում ենք երկակի իմաստ, մի դէպքում կապոյտը բացասական է, միւս դէպքում՝ պահպանակ «չարի»՝ բացասականի դէմ: Այսպիսի անցումը բնորոշ է ժողովրդական մտածողութեանն առհասարակ:

31 **Ե. Լալայեան,** *Վասպուրական*, էջ 153:

32 **Ս. Մխիթարեանց,** *Փշրանք Շիրակի ամբարներից (Հաւատք, ընտանեկան սովորոյթ)*,- ԷԱԺ, գ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 191:

33 **Կոնստանդին Երզնկացի,** *Վասն ոչ առնելոյ սուգ ի վերայ մեռելոց*, Ձեռագիր գրչաթուղթ, թիւ 1447 (Մատենադարան):

34 Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսու ՆՀԲ), հտ. 1, Երեւան, 1979, էջ 1055 էջ 153

35 **Ե. Լալայեան,** *Ջաւախքի բուրմունք*, էջ 153:

36 **Հր. Աճառեան,** *Հայերէնի արմատական բառարան*, հտ. 4, էջ 186: **Л. Сараджева,** *Армяно-славянские лексико-семантические памятники*, Ер., 1986, с. 93.

37 **Հր. Աճառեան,** *Հայերէնի արմատական բառարան*, հտ. 4, էջ 186: **Л. Сараджева,** *Армяно-славянские лексико-семантические памятники*, Ер., 1986, с. 93.

38 **Ս. Հայկունի,** *Աղօթքներ Բաբերդի բարբառով*, ԷԱԺ, գ. Զ, էջ 305:

39 **Ե. Լալայեան,** *Վասպուրական*, էջ 166:

40 **Գ. Ցակոբեան,** *Ներքին Բասենի ազգագրութիւնը եւ բանահիւսութիւնը*, Երեւան, 1974, էջ 204:

41 *Мифы народов мира*, т. II, с. 309-310.

42 **Հր. Աճառեան,** *Հայերէնի արմատական բառարան*, հտ. 4, Երեւան, 1979, էջ 264-265:

43 **Հ. Վ. Հացունի,** *Պատմութիւն հին հայ տարազին*, էջ 295:

44 **Հ. Ղ. Ալիշան,** *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վենետիկ, Ս. Ղազար, 1895, էջ 413, 414:

45 **Ն. Տաղաւարեան,** *Հայոց հին կրօնները*, Կ. Պոլիս, 1909, էջ 152:

46 **Հ. Վ. Հացունի,** նշ. աշխ., էջ 174:

47 Հարկ է նշել, որ Կիլիկեան վերջին թագաւորը վախճանուեց Ֆրանսիայում, որտեղ, ինչպէս եւրոպական թագաւորական տներում առհասարակ, սպիտակն ընդունուած էր որպէս սգոյ գոյն:

48 **Գրիգոր Տաթեւացի,** անդ, էջ 303:

49 **Վ. Բդոյեան,** *Հարսանեկան ծէսերի ու սովորութիւնների նկարագիր՝ գրանցուած 14-րդ դ.*,- Բանբեր Մատենադարանի (այսու՝ ԲՄ), 1956, 19, էջ 55:

50 **Հ. Վ. Հացունի,** *Հայուհին պատմութեան առջեւ*, Վենետիկ, Ս. Ղազար, 1936, էջ 72:

51 **Ն. Տաղաւարեան,** նշ.աշխ., էջ 37, 39:

52 **Б. Т. Ардзинба.** *Ритуалы и мифы древней Анатолии*, М., 1982, с. 210-213.

53 **С. Гулакян.** *Указатель мотивов армянских сказок*, Ереван, 1983, А 203, А 247.

54 **Б. Т. Ардзинба.** с. 161.

55 Չինացիների, հին եգիպտացիների աւանդոյթներում նոյնպէս գունային վերոյիշեալ համակարգը տիեզերքի կառուցուածքի խորհրդանիշն է:

56 **Մ. Աբեղեան,** *Երկեր*, հտ. է, էջ 99:

57 **Ե. Լալայեան,** *Զանգեզուր*, ԱՀ, գ. 4, Թիֆլիս, 1898, էջ 256:

58 **В. В. Иванов,** *Заметки о типологическом и сравнительно-историческом исследовании Римской, индоевропейской мифологии*, Труды по знаковым системам, Тарту, 1969, в. 4, с. 24.

59 **В. Тернер,** *Проблема цветной классификации в примитивных культурах, Семиотика и искусствометрия*, М., 1972, с. 71-80.

60 **В. Тернер,** *Символ и ритуал, Семиотика и искусствометрия*, М., 1983, с. 70.

61 Անդ, էջ 78:

62 Սեւ-սպիտակով արտայայտւում են նաեւ այն-

© National Library of Armenia

պիսի երկակի հակադրութիւններ, ինչպէս, օրինակ զոյգ եղբայրները (Հարաւային Կալիֆորնիայի հնդկացիներ), որոնցից մէկը կապուած է արեւելքին, սպիտակին ու բարեգործ է, միւսը՝ մթի, սեւի, արեւմուտքի հետ եւ չարագործ է: Կամ տիբեթական առասպելներում սպիտակ ձուից դուրս եկող լոյսի թագաւորը սեւ ձուից դուրս եկող մթարքի թագաւորը: Տե՛ս **В. В. Иванов, В. Н. Топоров.** *Славянские языковые моделирующие семиотические системы*, Древный период, М., 1965, с. 185.

63 **В. В. Иванов,** *Чет и нечет, Ассиметрия мозга и знаковых систем*, М., 1978, с. 81.

64 **В. В. Иванов, В. Н. Топоров.** Նշ. աշխ., էջ 98, **В. Тернер,** *Символ и ритуал*, с. 79.

DIE ARMENISCH-APOSTOLISCHE KIRCHE IN DER SCHWEIZ

Abel Manoukian (Oghlukian)

Die Armenisch-Apostolische Kirche in der Schweiz

Die Geschichte der armenischen Kirche in der Schweiz hängt sehr eng mit jener grossartigen christlich-humanitären Hilfe zusammen, die das Schweizer Volk bereits vor 100 Jahren den leidgeprüften Armeniern in der Türkei geleistet hat. In der Schweiz wurde das Massaker von Sassun schon im Dezember 1894 bekannt, und über die blutigen Ereignisse von Konstantinopel im September-Oktober 1895 und die nachfolgenden schrecklichen Massaker in allen armenischen Provinzen wurde in den Tageszeitungen, vor allem in christlichen Blättern, berichtet.[1]

Der Initiator dieser Verfolgungen und Massaker war der «rote Sultan» Abdul Hamid II., der als der «grosse Meuchelmörder» in die Geschichte eingegangen ist. Er war der begabteste, aber auch der grausamste Sultan, den die Türkei seit Jahrhunderten gehabt hatte, ein Herrscher, der skrupellos über Leichen ging, auch über die seiner Verwandten und Freunde. Er war sehr feige und misstrauisch. Zudem hatte er einen abgrundtiefen Hass gegen alles Armenische, gewiss aus einem Mutterkomplex, aus Erbitterung darüber, dass er kein reiner Türke war, sondern von einer armenischen Haremsklavin abstammte.

Bereits im Oktober und im November 1895 erschienen die ersten kurzen Artikel über die Armenierpogrome in der Türkei in der «Gazette de Lausanne» und im «Journal de Genève». Das «Journal religieux des Eglises Indépendantes de la Suisse Romande» in Neuenburg brachte am 16. November 1895 den ersten Aufruf zu einer Sammlung für die Armenier in der Türkei unter dem Titel «Nouveaux massacres», verfasst von Pfarrer E. Jaccard in Zürich. Im gleichen Blatt erschien am 28. Dezember 1895 unter dem Titel «Les massacres en Arménie» der erste einer ganzen Reihe von Artikeln über Armenien von Prof. Georges Godet.

Die Armenierhilfe in der Schweiz

Der eigentliche Anstoss zu einer schweizerischen Armenierhilfe kam von Neuenburg durch die Initiative eines einzelnen, des Pfarrers Edouard Rosselet. Am 4. März 1896 wurde in der Stiftskirche von Neuenburg eine Konferenz der Pfarrer der «Eglise Indépendante» gehalten. In dieser Konferenz wurde beschlossen, ein Aktionskomitee unter der Leitung von Prof. Georges Godet zu bilden. Das Protokoll jener Sitzung erwähnt: «Herr Edouard Rosselet ist tief erschüttert durch einen Artikel im "Journal des Missions Evangéliques de Paris" über die Massaker in Armenien. Er glaubt, Gott wolle sich nicht der Grossmächte bedienen, um dieser unglücklichen Bevölkerung zu Hilfe zu kommen, sondern der geistlichen Mächte, die er im Schosse der Kirche finden muss. Vereinigen wir uns mit den Amtsbrüdern der <Eglise nationale>, um auf die Kirchen der ganzen Schweiz einzuwirken und eine Bewegung zugunsten der verfolgten Christen auszulösen».

Alle Konferenzteilnehmer waren sich darüber einig, für diesen Zweck einen wirksamen Weg auszuwählen: Aufklärung der öffentlichen Meinung durch Zeitungsartikel und einen Appell an das Gewissen der Schweizer. Prof. Godet wurde gebeten, eine Broschüre über die Massaker in Armenien zu verfassen. Das war die eigentliche Geburts-

© National Library of Armenia